ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» նոյեմբերի 2019 թվական N 118-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 17-րդ հոդվածի ,***որոշում եմ*** '

1. 2019 թվականի նոյեմբերի 4-ին ժամը 16.00-ին գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1)Համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 9-ի N 55-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

2)Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի կարգով օտարելու վերաբերյալ

3)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 57-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.նոյեմբերի 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 86 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» նոյեմբերի 2019թվական N 119-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման ,հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2019թ. նոյեմբերի 4-ի N 58-Ա որոշումը և քաղաքացի Լևոն Սերյոժայի Ազատյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը և սպասարկման ու պահպանման հողամասը ուղղակի վաճառքով գնելու համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Մայակովսկի համայնքի սեփականություն հանդիսացող 1-ին փողոց թիվ 2/5 հասցեում գտնվող 149.28 քառ.մետր մակերեսով շինությունները և դրանց սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.07617 հա հողատարածքը /ծածկագիր՝ 07-043-0103-0001 / ուղղակի վաճառքով օտարել Մայակովսկի համայնքի 1-ին փողոց, թիվ 23 հասցեի տան բնակիչ Լևոն Սերյոժայի Ազատյանին :

2.Սահմանել, որ Լևոն Սերյոժայի Ազատյանը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 149.28 քառ.մետր շինության արժեքը ՝ 2 821 392, և 761.7 քառ.մետր հողամասի արժեքը ՝2 239 398 , ընդամենը՝ 5 060 790 / հինգ միլիոն վաթսուն հազար յոթ հարյուր իննսուն / Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը :

2)Իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ: Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել Հայաստանի Հանրապետության կառավարության 912-Ն որոշման 37-րդ կետով սահմանած կարգով:

4.Շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, այն կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.նոյեմբերի 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» նոյեմբերի 2019 թվական N 120-Ա

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Մայակովսկի համայնքապետարան է դիմել բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող՝ Երևանի պետական համալսարանիմիջազգային հարաբերությունների ֆակուլտետի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանող Գոռ Գրիգորյանը՝ խնդրելով կատարել ուսման վարձի որոշակի դրամական փոխանցում :

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 –րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետի . ***որոշում եմ՝***

1. Կատարել փոխանցում Գոռ Գրիգորյանի անունով 50 000 / հիսուն հազար / դրամ ուսման վարձ <<Արդշինբանկ>> ՓԲԸ , 2470100009060000 հաշվի համարին :
2. Հանձնարարել հաշվապահ Աստղիկ Հարությունյանին կատարել փոխանցում :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թնոյեմբերի 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 06>> նոյեմբերի 2019թվական N 121-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆ » ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի,հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 10-ի թիվ 04-Ա որոշումը, ի կատարումն Կոտայքի մարզպետի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի N01/08.1/07464 գրությանը, ***որոշում եմ՝***

1.<< Հայաստան >> համահայկական հիմնադրամին տրամադրել ֆինանսական աջակցություն ՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանօրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.նոյեմբերի 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» նոյեմբերի 2019 թվական N 122-Ա

## ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴԳԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչ Էդգար Գրիգորյանի դիմումը և ղեկավարվելով Հողային օրեսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, «Ինքնակամ կառուցված շենքերի,շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի պահանջով,նկատի ունենալով այն հանգամանքը,որ Էդգար Գրիգորյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար,այն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օբյեկտների օտարման ,կամ անվտանգության,ինչպես նաև հնագիտական ,պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում,չի սահմանափակում այլ անձանց իրավունքները ,չի առաջացնում սերվիտուտ՝ ո ր ո շ ո ւ մ ե մ.

1.Ճանաչել Էդգար Գրիգորյանին/ ծնված 1991թ./ սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների փաստացի օգտագործվող 0.0938 հա մակերեսով հողամասի / կադաստրային ծածկագիր 07-043-0019-0021/ նկատմամբ,որը փաստացի նրանց կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.նոյեմբերի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» նոյեմբերի 2019 թվական N 123-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 17-րդ հոդվածի ,***որոշում եմ***՝

1. 2019 թվականի նոյեմբերի 13-ին ժամը 16.00-ին գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 57-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.նոյեմբերի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 86 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» նոյեմբերի 2019թվական N 124-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սամվել Գալուստյանի (ծնված՝ 1978թ.) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 13-րդ փողոցի թիվ 36 հասցեի տնամերձ հողակտորում 2010 թվականին ինքնակամ կառուցված պարիսպը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 19032019-07-0067 վկայական, «ԳԵՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հունիսի 18-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Սամվել Գալուստյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց թիվ 36 հասցեի տնամերձ հողակտորում 2010 թվականին ինքնակամ կառուցել է պարիսպ՝ 16.22 քառ.մետր:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Սամվել Գալուստյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց թիվ 36 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Սամվել Գալուստյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց թիվ 36 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված 16.22 քառ.մետր պարիսպը ճանաչել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 20440 (քսան հազար չորս հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը :

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ նոյեմբերի 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 86 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» նոյեմբերի 2019 թվական N 125-Ա

## ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Մայակովսկի համայնքապետարան է դիմել բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող՝ Երևանի պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսանող Մելինե Վարդանյանը՝ խնդրելով կատարել ուսման վարձի որոշակի դրամական փոխանցում :

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 –րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետի . ***որոշում եմ՝***

1. Կատարել փոխանցում Մելինե Վարդանյանի անունով 50 000 / հիսուն հազար / դրամ ուսման վարձ <<Ամերիա բանկ>> ՓԲԸ , 15700277909096010 0 հաշվի համարին :
2. Հանձնարարել հաշվապահ Աստղիկ Հարությունյանին կատարել փոխանցում :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թնոյեմբերի 18